ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, Վարդանանք և հայ երիտասարդությունը, «Մագաղաթ» հրատ., Ե., 2008, 92 էջ:

«Մաշտոցյան Մատենադարան» մատենաշարով լույս է տեսել Վարդան Դևրիկյանի «Վարդանանք և հայ երիտասարդությունը» գիրքը: Այն բաղկացած է վեց գլուխներից, յուրաքանչյուրն ունի խոսուն բնաբան, որոնց հեղինակները՝ Նիկողայոս Ադոնց, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան, Թորգոմ պատրիարք Գուշակյան, Գրիգոր Տաթևացի, Ղևոնդ Ալիշան, հայ ժողովրդի դարավոր պատմության մեծ գիտակներ են, որոնց խոսքում առկա է Վարդանանց հայրենասիրական էության խոր ընկալումը, որը երբեք չի հնանալու ու միշտ լինելու է ուղեցուցային:

Գիրքը բացվում է Նիկողայոս Ադոնցի հետևյալ բնութագրմամբ. «Դժվար է գտնել որևէ պատմության մեջ մի իշխանական տուն, որ դարերի ընթացքում մնար այնպես հավատարիմ իր տոհմական մտայնությանը և ավանդներին: Ութերորդ դարի Մուշեղը հար և նման էր չորրորդ դարի Մուշեղին: Արյան հետ ժառանգում էին ընտանիքի հերոսական ոգին: Անուններն անգամ, որ անցնում էին սերնդեսերունդ, հուշարարներն էին իրենց անցյալի: Մամիկոնյան տունը հայ զինվորական կորովի մարմնացումն է, հայ ասպետական կարողության կենդանի պատկերը» (էջ 3): Վ. Դևրիկյանը Վարդանանց ազգային-ազատագրական պատերազմը շաղկապում է մեր նախահոր՝ Հայկի ազատատենչության հետ, որը Վարդանանցից անցել է Վահանանց, հետո Ղևոնդ երեց պատմիչի պատկերած Վարդանակերտով, Անիի հերոսական պաշտպանությամբ, Սարդարապատի դյուցազնական հաղթանակով և նժդեհյան ոգով հասել մինչև Արցախի ազատագրումը: Հենվելով պատմական փաստերի վրա՝ հեղինակը ներկայացնում է Մամիկոնյան տոհմի ծննդաբանությունը: Նա օգտագործում է Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Սեբեոսի և Հովհան Մամիկոնյանի երկերի փաստերը: Վ. Դևրիկյանը հիշեցնում է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ պատկերված՝ Մամիկոնյանների ապշեցուցիչ տիրասիրությունը, հանուն հայրենի պետականության ու գահի պահպանման մահը առ ոչինչ համարելը: Ու թեև Արշակունյաց թագավորությունը 428-ին վերացավ, սակայն շատ չանցած՝ 451-ին հայերն օտար լծի դեմ բարձրացրին ապստամբության դրոշը, որի ոգին Վարդան Մամիկոնյանն էր և Վարդանանք:

Գրքի երկրորդ գլուխը նվիրված է Վարդանանց պատերազմի լուսաբանմանը հայոց պատմագրության մեջ: Հեղինակը մատնացույց է անում, թե Եղիշեի և Ղազար Փարպեցու պատմությունները որ տեղերում են լրացնում իրար: Նա համոզիչ փաստերով հարում է այն հայագետների տեսակետին, որոնք պնդում են Եղիշեի՝ Վարդանանց պատերազմի ականատես ու մասնակից լինելը: Կարևոր է այն նուրբ նկատումը, որ Վարդանանց կռիվը նաև հայոց պետականության և հայ ազգային ինքնուրույնության համար էր: Մի իրողություն, որին ձգտում էր նաև Վասակ Սյունեցին, սակայն հետո դավաճանեց Վարդանանց սրբազան ուխտին. «Հազկերտի դատական ատյանում հայ նախարարներից Արշավիր Կամսարականի՝ Վասակին ուղղված խոսքերից ևս երևում է, որ Վասակն ունեցել է քաղաքական որոշակի ծրագիր, որը, սակայն, չի կարողացել իրականացնել» (էջ 17): Վ. Դևրիկյանը ճիշտ է նկատել Եղիշեի միտումը. պատմիչը կամենում էր հայ ժողովրդին զերծ պահել հետագա դարերում ևս հնարավոր դավաճանական քայլերից. «Այս հիշատակարանը գրվեց նրա մասին՝ նրա հանցանքները կշտամ-

բելու և նրան մեղադրելու համար, որպեսզի ամեն մարդ, որ լսի և իմանա այս բանը, նզովք կարդա նրա հետևից և նրա գործերին ցանկացող չլինի»[1]:

Վ. Դևրիկյանը գրքում դրել է Վարդան Մամիկոնյանի ճառի այն հատվածը, որով նա դիմում է իր նիզակակիցներին ճակատամարտից առաջ՝ պատգամելով պարտվելու դեպքում քաջությանը վախկոտություն չխառնել: Նա վերաշարադրել է Եղիշեի երկի՝ գեղարվեստական առումով երկու կատարյալ հատվածները՝ Ավարայրի ճակատամարտի և փափկասուն տիկնանց նկարագրերը, որոնք հայ գեղարվեստական արձակի սկզբնավորման շրջանի փայլուն նմուշներ են. «Եղիշեն Ավարայրը ներկայացնում է գարնան համապատկերում, և Ավարայրի յուրօրինակ համարժեքը եղող Հայոց աշխարհի փափկասուն կանանց նվիրված հատվածը ևս միաշաղախում է գարնան, հույսի, զվարթության և կենսաբերության պատկերներով՝ պայծառ մի թախիծով և հուզականությամբ ներկայացնելով նրանց սպասումը, անարյուն զոհողությունը և հավատարմությունը սիրելիներին»(էջ 25): Եղիշեի գրքի դաստիարակչական նշանակությունը չի խամրել դարերի ընթացքում: XIX դ. այն դառնում է ոգևորության աղբյուր Խ. Աբովյանի, Մ. Նալ-բանդյանի, Ռ. Պատկանյանի, Ղ. Ալիշանի համար: Ռ. Պատկանյանը հայ երիտասարդներին հորդորում էր «շուտ-շուտ կարդալ այդ ոսկետառ գրքքույկը»: Ուշագրավ է, որ հայ բանագիտության ու բանահավաքության երախտավոր Գ. Սրվանձտյանցը, կարդալով Եղիշեի պատմությունը, խանդավառվում է Վարդանանց սխրանքներով, «փոխում է իր մկրտության անուն-ազգանունը և Վ արդան Մամիկոնյանի անվեհեր զինվորներից մեկի՝ Գարեգին Սրվանձտյանի անուն-ազգանունով իրեն կոչում է Գարեգին Սրվանձտյանց»[2]:

Վ. Դևրիկյանն իրավացիորեն նկատում է, որ Ավարայրը պարսից արքունիքին ստիպում է գնալ որոշակի զիջումների, իսկ հայ նախարարների միջև պառակտիչ գործունեություն ծավալելու հետևանքը եղավ հայերի երկրորդ ապստամբությունը Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ, որը Վարդան Մամիկոնյանի Հմայակ եղբոր (վերջինս նույնպես նահատակվել էր Ավարայրի ճակատամարտի ժամանակ) որդին էր: Արշակ Չոպանյանը Վահան Մամիկոնյանին համարում է Վարդանի գործի շարունակողը. «Առանց Վարդանին հայ ժողովուրդը պիտի չի հասներ այն մեծաբորբոք խանդավառության, այն գերագույն զոհաբերության, որոնց վրա հենվելով Վահան կրցավ իր հնարագետ ծրագիրը հաջողցնել, բայց անշուշտ նաև առանց Վահանին ճարտար ու խորագետ քաղաքագիտությանը, Վարդանին հարուցած շարժումը պիտի հանգեր ջնջումի: Երկուքը իրար կը լրացնեն: Եվ մեր պատմությունը շատ անգամ կրկնած է այդ երկադրվագ դյուցազներգությունը» (էջ 39):

«Վարդանանք և Հայոց եկեղեցին» գլխում Վ. Դևրիկյանը նկարագրում է Վարդանանց և Ղևոնդյանց նվիրված տոները, որոնք սիրված են առ այսօր: Քրիստոնեական եկեղեցու պատմության հետաքրքիր իրողություններից է այն, որ հանուն հայրենյաց նահատակված Ավարայրի հերոսները դարձան հայ եկեղեցու սիրված դեմքեր, և նրանց անունները մտան եկեղեցական տոնացույցերի մեջ: Վարդանանց և Ղևոնդյանց նվիրեցին (Հովհաննես Սարկավագ Իմաստասերը՝ Ղևոնդյանց, Ներսես Շնորհալին՝ և՛ Ղևոնդյանց, և՛ Վարդանանց) զողտրիկ շարականներ, որոնք երգվում են այդ տոների ժամանակ: Հայ միջնադարյան քնարերգության մեջ Շնորհալին մեծ նորարար է, որը երևում է նաև Վարդանանց նվիրված՝ «Նորահրաշ պսակավոր» խորագրով շարականից: Ինչպես իրավացի նկատել է Վ. Դևրիկյանը, Ն. Շնորհալին շարականը գրել է ոչ միայն որպես աքրոստիկոս, այլև շարականի բոլոր տների առաջին տառերը կապում են «Ներ-

---

[1] **Եղիշե,** Վարդանի և հայոց պատերազմի մասին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1989, էջ 283:

[2] **Գարեգին Սրվանձտյանց,** Երկեր, հ. 1, Ե., 1978, էջ 8:

սեսի երգ» արտահայտությունը: Որոշ տների երեք տողերը սկսվում են նահատակված հերոսի անվան առաջին տառով. «Անհրաժեշտ է նշել, որ բանաստեղծ կաթողիկոսը բանաստեղծական մեծ վարպետությամբ և ներշնչանքով կարողացել է թե՛ հիշվող նահատակների անվանը համահունչ նմանաձայնություն ստեղծել և թե՛ այս ամենը ներկայացնել հուզական և ներդաշնակ ձևի մեջ» (էջ 50):

Գրքի հեղինակը նաև անտիպ նյութեր է ներառել Մաշտոցի անվան Մատենադարանի գանձարան ժողովածուներից: Բերում է մի տաղ, որի հեղինակը, հավանաբար, ունեցել է Մաթէոս անունը՝ ըստ աքրոստիկոսի: Այդ տաղում Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակավոր» շարականի նման հիշվում են Ավարայրի հերոս քաջերը (էջ 57):

«Վարդանանք և հայ երիտասարդությունը» գլխում ներկայացվում է Գրիգոր Տաթևացու դերը քարոզների միջոցով հայ երիտասարդության մեջ հայրենասիրություն սերմանելու գործում: Իր Քարոզգրքերի «Զմռան» և «Ամառան» ստվարածավալ հատորներում մեծ փիլիսոփան, մանկավարժն ու հոգևոր գործիչը հայ երիտասարդին կրթում ու դաստիարակում է հենց Վարդանանց օրինակով: Նրա քարոզներից մեկը կոչվում է. «Վասն իմաստութեան լուսոյ և գործոց, որ և Սրբոց Վարդանանց պատշաճի» (էջ 60): «Վասն մանկանց երիտասարդաց և Սրբոց Վարդանանց» քարոզում Գրիգոր Տաթևացին հանուն գաղափարի կյանքը զոհած մարդու դասական մարմնավորում է համարում Վարդան Մամիկոնյանին և նրա ընկերներին. «Զմարտիրոսն խոստովանող կոչեմք, որք բանիւ և գործով խոստովանեցան զՔրիստոս և հեղին զարիւն իւրեանց վասն անուան Նորա, որպէս Սուրբն Վարդան և ընկերք նորա» (էջ 64):

Ինչպես հայրենասիրության ու ազգին ծառայելու օրինակը Վարդանն է, այնպես էլ Վասակը մի առանձին քարոզում ներկայացվում է որպես մեղավորության, հերձվածողության ու դավաճանության մարմնացում:

Վ. Դևրիկյանը նկարագրում է Ավարայրի նահատակներին նվիրված տոները, որոնք հայ ժողովուրդը նշել է մեծ խանդավառությամբ: Օգտվելով բանագիտական, ազգագրական մի շարք աղբյուրներից («Յայսմաւուրք», Ա. Ղանալանյան, Ավանդապատում)՝ նա ներկայացնում է նաև Վարդանին, Վարդանանց առնչվող ավանդությունները, մասունքները:

Վարդանանց փառաբանումը հայ մատենագրության մեջ նոր ձևով երևան եկավ XIX դարում, երբ նոր գրականության լուսավոր դեմքերը (Խ. Աբովյան, Ղ. Ալիշան և այլք) Վարդան Մամիկոնյանին դիտեցին որպես ազգային առաջնորդի կատարելատիպ, որը նրանց դարերի խորքից հրահանգում է շարունակել իր արդար գործը: Վ. Դևրիկյանի գրքի վերջին գլխում ներկայացվում են Ղ. Ալիշանի, Ռ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի՝ Վարդան Մամիկոնյանին և Վարդանանց նվիրված գործերը:

«Վերջաբանի փոխարեն» եզրափակող մասում զետեղված է բանաստեղծ Արմեն Դավթյանի «Վարդանանք» բանաստեղծությունը, որը վկայում է, որ Վարդանանց ոգին կենդանի է այսօր էլ ու նույն զորությամբ ոգեշնչում է հայ երիտասարդությանը:

Վ. Դևրիկյանի «Վարդանանք և հայ երիտասարդությունը» գիրքը արդիական է և հանձնարարելի հասարակական ամենատարբեր խավերին:

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Ռ. Վ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու